Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի « Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի «Կերպարվեստ» (8 դասաժամ) , «Մաթեմատիկա» (5 դասաժամ) , « Ֆիզիկա» (15դասաժամ) , « Իմ հայրենիքը և աշխարհը» (3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_ դիմում (Ձև 1)

_ 1 լուսանկար 3 X 4 չափի

_ բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) , միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ:

_ անձը հաստատող փաստաթուղթ

_ «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 – ին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում)

_ ինքնակենսագրություն (Ձև 5)

_ այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ - ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

_ ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

_ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թվական ապրիլի 28 –ի N 596 –Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)
- « Հանրակրթության մասին » օրենքի 26- րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:
- « Հանրակրթության մասին » օրենքի 26- րդ հոդվածի 2 – րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 02.09.2024թվականից մինչև 12. 09.2024թվականը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից 15:00 -ը , բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թվականի սեպտեմբերի 18 – ին , ժամը 14^{00} –ին ՀՀ Շիրակի մարզի Ազատանի միջնակարգ դպրոցում :

Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք /բնակավայր Ազատան , փողոց 19, շենք 17 :

Տեղեկությունների համար զանգահարել 094121412:

ՀՀ Շիրակի մարզ « Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ի տնօրեն՝

Հ. Ոսկանյան